# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**26 սեպտեմբերի 2025թ.**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին**

***ՇԵՆ ԴԵԿՈՐ ՍՊԸ-ի տնօրեն***
***Հասմիկ Մակարյանին***

Հարգելի տիկին Մակարյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ՇԵՆ ԴԵԿՈՐ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի սեպտեմբերի 04-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-2** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Սահմանված ժամկետում Ձեր կողմից Պայմանագրի 9-րդ չափաբաժնով (Պահարաններ զարգացնող միջավայրի համար /աշխատանքային կենտրոն/) նախատեսված ապրանքների մատակարարում չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2025թ.-ի սեպտեմբերի 29-ից Պայմանագիրը նշված չափաբաժնի մասով մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **138600 (մեկ հարյուր երեսունութ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամի և **92400 (իննսուներկու հազար չորս հարյուր)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201183)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ՇԵՆ ԴԵԿՈՐ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**